# ԱՆՊՏՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

## ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

***Ձեր կյանքում կա՞ն ոլորտներ որոնցում դուք բազմիցս անգամ զգում եք պարտություն և հիասթափություն: Կարի՞ք է ձեզ համար արդյունավետ լինել ձեր կյանքի որոշակի ասպեկտներում:***

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 4 Թագ. 2.19-22

*19 Եւ այն քաղաքի մարդիկն ասեցին Եղիսէին. Ահա քաղաքիս դիրքը լաւ է ինչպէս որ տէրս տեսնում է, բայց ջուրը վատ է եւ երկիրը՝ անպտուղ: 20 Եւ նա ասեց. Ինձ մի նոր կուժ բերէք եւ մէջը աղ դրէք. եւ բերին նորա մօտ: 21 Եւ նա գնաց ջուրերի աղբիւրի մօտ եւ աղ գցեց այնտեղ, եւ ասեց. Այսպէս է ասում Տէրը. Ես **բժշկեցի** այս ջուրերը. այսուհետեւ **այդտեղից այլ եւս մահ եւ անպտղութիւն** չլինի: 22 Եւ այն ջուրերը բժշկուեցան մինչեւ այսօր՝ Եղիսէի խօսած խօսքին պէս:*

> ***ՀԵՍՈՒ 6.26 — Հեսուն այդ ժամանակ երդվեց՝ ասելով. «Թող անիծյալ լինի Տիրոջ առաջ այն մարդը, որ վեր կկենա և կշինի այս Երիքով քաղաքը, նրա հիմքերը կդնի իր անդրանիկ որդու կյանքի գնով և նրա դարպասները կկանգնեցնի իր կրտսեր որդու կյանքի գնով»:***

> ***Գ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ 16.33-34 — Եվ Աքաաբն Աստարովթի մի կուռք շինեց և Աքաաբը շարունակեց այնպես անել, որ Իսրայելի՝ իրենից առաջ եղած բոլոր թագավորներից ավելի շատ բարկացրեց Իսրայելի Տեր Աստծուն: Նրա օրոք բեթելացի Հիելը շինեց Երիքովը. իր անդրանիկ որդի Աբիրոնի հետ դրեց նրա հիմքը և իր կրտսեր որդի Սեգուբի հետ կանգնեցրեց նրա դռները Տիրոջ այն խոսքի համաձայն, որ ասել էր Նավեի որդի Հեսուի միջոցով:***

### *ԻՆՉ՞ՈՒ ԱՂ ԼՑՐԵՑ ԴԱՌԸ ՋՐԵՐԸ ՄԵՋ*

## I. ՊՏՂԱԲԵՐ ԼԻՆԵԼՆ ԱՍՏԾՈ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

*Ահա քաղաքիս դիրքը լաւ է ինչպէս որ տէրս տեսնում է, **բայց ջուրը վատ է եւ երկիրը՝ անպտուղ:***

- ***Երկրի (քաղաքի, տան) վիճակը կախված է նրա քաղաքացիների հոգեւոր վիճակից:***

  ***Բ Մնացորդաց 7.14 – Եվ իմ ժողովուրդը, որի վրա իմ անունն է դրված, խոնարհվի, աղոթի, իմ երեսը փնտրի ու ետ դառնա իր չար ճանապարհներից, այն ժամանակ ես երկնքից կլսեմ, կներեմ նրա մեղքը և կբժշկեմ նրա երկիրը:***

- ***«Մարդը տեսնում է աչքին երևացողը, իսկ Տերը սրտին է նայում»: Ա Թագ. 16.7***

**ԱՀԱ ՔԱՂԱՔԻՍ ԴԻՐՔԸ ԼԱՒ Է, ԲԱՅՑ ______________________:**

- ***Աստված ցանկանում է, որ Իր ժողովուրդը պտղաբեր լինի:***
  ***God desires His people to be fruitful.***

***Վազը Իսրայելի հոգևոր արտոնությունների խորհրդանիշն է:***
***Թզենին Իսրայելի ազգային արտոնությունների խորհրդանիշն է:***
***Ձիթենին Իսրայելի կրոնական արտոնությունների խորհրդանիշն է:***

***Հովհ. 15.8 – Իմ Հայրն այն դեպքում կփառավորվի, երբ դուք շատ պտուղ տաք և իմ աշակերտները լինեք:***

*16 Դո՛ւք չէ, որ ինձ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի ու ձեզ կարգեցի, որպեսզի դուք գնաք և* ***պտուղ բերեք,*** *ու ձեր պտուղը մնա. որպեսզի ինչ որ իմ անունով խնդրեք Հորից, տա ձեզ:*

- **Իսկ ո՞րն է անպտղության պատճառը.**

*Մարկոս 4.19 – Բայց աշխարհիս* ***հոգսերն ու հարստության պատրանքը*** *և ուրիշ ցանկությունները ներխուժում են, խոսքը խեղդում և անպտուղ են դարձնում:*

*Գաղ. 5.16 - 16 Բայց ասում եմ. Հոգով գնացէք, եւ մարմնի ցանկությունը չէք կատարի:*

- **Պտղաբեր լինելն Աստծո ցանկությունն է մարդկության համար, իսկ ի՞նչ պետք է անենք որպեսզի Անպտղությունից անցնենք դեպի պտղաբերության:**

## II. ԱՆՑՅԱԼԻ ՅԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԺՇԿՎԵԼՆ ԱՍՏԾՈ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է ՁԵԶ ՀԱՄԱՐ:

***19 Եւ այն քաղաքի մարդիկն ասեցին Եղիսէին.***

**Առաջինը պետք է գիտակցենք որ օգնության կարիք ունենք**

*20 Եւ նա ասեց. Ինձ մի* ***ՆՈՐ ԿՈՒԺ*** *բերէք եւ մէջը աղ դրէք. եւ բերին նորա մօտ: 21 Եւ նա գնաց ջուրերի աղբիւրի մօտ եւ աղ գցեց այնտեղ, եւ ասեց. Այսպէս է ասում Տէրը. Ես* ***բժշկեցի*** *այս ջուրերը. այսուհետեւ* ***այդտեղից այլ եւս մահ եւ անպտղութիւն չլինի:*** *22 Եւ այն ջուրերը բժշկուեցան մինչեւ այսօր՝ Եղիսէի խօսած խօսքին պէս:*

**ՆՈՐ ԿՈՒԺ բերէք — Խրախուսված, ներված, ազատագրված, հնազանդ...**

*Ելից 15.25-26 – Մովսեսն աղաղակեց Տիրոջը, և Տերը նրան մի փայտ ցույց տվեց: Մովսեսն այն գցեց ջրի մեջ, և ջուրը քաղցրահամ դարձավ: ...որովհետև ես եմ Տերը՝ քո բժիշկը»:*

- **Բժշկված աղբյուրից միայն առողջ ջուր է դուրս գալիս:**

*Եզեկիել 47.8-12 – 8 Եվ ինձ ասաց. «Այս ջրերը դուրս են գալիս դեպի արևելյան գավառը և իջնում են անապատը, և երբ մտնեն* ***ծովը՝ պղտոր ջրերի ծովը, ջրերը կթարմանան:***

*9 Եվ ամեն կենդանի շունչ, որ շարժվում է նրանում այն բոլոր տեղերում, ուր գնում է գետը, պիտի ապրի, և* ***ձուկը խիստ շատ պիտի լինի,*** *որովհետև այս ջրերն այնտեղ են հասնում, ուր նրանք պիտի թարմանան, և ամենքը պիտի կենդանանան, ուր էլ որ գնա գետը:*

*10 Եվ նրա մոտ* ***ձկնորսներ պիտի կանգնեն,*** *Ենգադդից մինչև Ենեգլայիմ. ուռկաններ փռելու տեղ պիտի լինի, նրա ձկները* ***բազմատեսակ պիտի լինեն,*** *Մեծ ծովի ձկների պես և խիստ շատ:*

*11* ***Նրա տիղմերը և ճահիճները չեն թարմանալու,*** *աղի համար պիտի մնան: Եվ գետի վրա՝ նրա եզերքին, այս կողմից և այն կողմից ամեն տեսակ պտղաբեր ծառեր պիտի բուսնեն. նրանց տերևը չի թառամելու, և նրանց պտուղը չի հատնելու. ամեն ամիս նոր պտուղ պիտի տա, որովհետև* ***նրա ջրերը սրբարանից են բխում:*** *Նրանց պտուղը ուտելու համար է, իսկ նրանց* ***տերևները՝ բժշկության համար»:***

*Կողոսացիներին 2:6-7 – Ուրեմն ինչպես ընդունեցիք Քրիստոս Հիսուսին՝ Տիրոջը, նրանով էլ ընթացե՛ք՝* ***արմատավորված և նրանով շինված,*** *հավատի մեջ հաստատված, ինչպես որ սովորեցիք, և դրա մեջ աճե՛ք գոհություն հայտնելով:*

## ՀԱՑՈՐԴ ՔԱՅԼԸ:

*Երգ Երգոց 4.15-16 – Պարտեզների աղբյուր, կենդանի ջրհոր և Լիբանանից հոսող վտակներ: Զարթնի՛ր, ո՛վ հյուսիս ային քամի, և եկ՛, ո՛վ հարավային քամի, փչի՛ր իմ պարտեզին, թող նրա բույրերը տարածվեն:*

*Հակոբոս 3.11 – Մի՞թե մի աղբյուր նույն ակունքից քաղցր ու դառը ջուր կբխեցնի:*

*Կողոսացիներին 4:6 – Ձեր խոսքը միշտ թող շնորհով՝ ինչպես աղով համեմված լինի, որպեսզի գիտենաք, թե ինչպե՛ս է արժան ձեզնից յուրաքանչյուրին պատասխանել:*